

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ

ԳՐՈՂԵՆԵՐ



ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԻՎԻ ՅԵՐԳԸ



ՊԵՏՀՐԱՍ  
ՅԵՐԵՎԱՆ

1930

100

№ 2

ԿՈՄԱՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐՈՂՀԵՐ

№ 2

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԻՎԻ ՑԵՐԳԸ



H 80/11



ՊԵՏՐՈՎ 1980

ՀԱՅՈՈՒՆԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ № 505  
ՊԵՏՑՐԱԾ № 1445  
ԳՐԱՌԵՊԳԴԼԽ. 5999 (F).  
ՏԻՐԱԺ 2500

ԱՆԻՎԻ ՑԵՐԳՐ

Շողիդ ու չունչու ,  
Մեկ տեղ են ծուլվում .  
Անի՛դ իմ , դարձի՛ր :

Դեռ չկոշտացած ,  
Իմ բազուկները  
Քեզ , հետ են կապված .—  
Անի՛դ իմ , դարձի՛ր :

Դարձես թե կյանքում ,  
Յերկուսս ել եսպիս ,  
Մեկ տեղ ենք ծնովել .—  
Անի՛դ իմ , դարձի՛ր :

Անսանձ ու անզուսպ ,  
Մեր կա իմ սրառում .—  
Յես քեզ եմ սիրում .—  
Անի՛դ իմ , դարձի՛ր :

Մեր կյանքում հիմա ,  
Մեր յաց ու խինդը  
Մեկ տեղ են լինում .—  
Անի՛դ իմ , դարձի՛ր :

Որերս ուրախ ,  
Թե արտում անցնեն —  
Մենք , միասին ենք , —  
Անի՛վ իմ , դարձի՛ր :

Կյանքի փոթորկում  
Մենք իրար գտանք  
Միշտ եւ կլինենք ,  
Անի՛վ իմ , դարձի՛ր :

Ճողիդ ու շունչո  
Մեկ տեղ են ձուրվում , —  
Անի՛վ իմ , դարձի՛ր :

—

ՍԻՐՈ ՅԵՎ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԴ

Վառվում և այսոր կարոտն իմ նորից,  
Դարձիր ու հեվա , շոգեշունչ ընկեր—  
Դու այնքան մոտիկ , հարազատ ես ինձ .  
Հոգուց և գալիս քո ամեն մի հեվք :

Մենք միշտ անբաժան յերկու ընկերներ ,  
Կյանքի թելերով իրար հետ կապված ,  
Դեպի ապագան ճամբար յենք ընկել .  
Յերկու ընկերներ , յես ջահել դու ծեր :

Առավոտ և վաղ . թափ առ ու գարձի՛ր ,  
Յերշիղ պես ուրախ բերկում և հոգիս .  
Առսիս պիտի զա այսոր ինձ այցի .  
Անի՛վ իմ , անի՛վ , ա՛ռ նորից դու թափ :

Նստած վագնում զալիս և հիմա ,  
Թուչում և սիրալ զնացքից արագ .  
Յեվ զուցե հիմա հասավ կայարան ,  
Անի՛վ ի՛մ , անի՛վ , նորից դու թափ առ :

Հորձանք և տվել , յելել և սիրաս ,  
Վազում և առաջ անիմն իմ կյանքի ,  
Քո յերդն և այլպես , վոր յերգում եմ յես .  
Անի՛վ իմ , անի՛վ , կյանքին տանք նոր թափ :

## ՅԵՐԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

ՄԵՆՔ դուրս յեկանք մեր շարքերով՝ բաղմահաղար,

Վողողեցինք հեղեղի պես քաղաքը մեծ—

Մեր սրտերում հրդեհի պես պայքարն յեռաց.

Հոկտեմբերն եր, Հոկտեմբերն եր, վոր բռնկվեց :

Հորձանք տվինք ու բարձրացանք ծովի նման,

Հողմերի պես մենք միշտ հզոր ու վիթխարի.

Այնքան դավեր ու կոփներ յեկան անցան,

Ո՞վ կարող ե մեր բանակը հաղթահարի :

Թող վորոտան թնդանոթներ մահառարսուռ

ինչքան կուզեն՝ զրահապատ տանկեր թող չան,

Մենք միշտ պատրաստ, մենք անսասան, մենք միշտ

արթուն,

Բարիկադներ կբարձրանանք վերջին անդամ :

Ու ծովերից, ովկյաններից ռազմանավեր

Վորքան կուզեն թող արշավեն ու թող ճշան,

Արյան փայլով անգամ ողը թունավորեն—

Նրանք մեր դեմ ճակատ ճակտի չեն կարող դալ :

Մեր սաղմը թե քարին ընկալ՝ ելի կամի,

Զուր են փորձում աշխարհավեր հրդեհն վառել,

Կրաղմանանք առանց արև, առանց ջրի—

Թող վորոտան, թող չսպասեն հրանոթներ :

Դորքան կուզեն ոհ բանակներ թող նորից գան,  
Ինչքան կուզեն թող վոր մեր դեմ լարեն դավիր  
Մենք պատրաստ ենք, ինչքան ել վոր մեղ սպառնան.  
Մենք պատրաստ ենք, մենք հզոր ենք, մենք աներեր :  
  
Մենք ենք, մենք ենք, ապազայի անպարտ բանակ,  
Մենք ենք, մենք ենք, վոր ամենից հզոր յելանք—  
Վազը նորից կոխվ ու մահ պիտի լինի .  
Մենք ենք, մենք ենք վերջին անդամ, վոր պիտի գանք :

---

## ՎԵՐԱԴԱՐՁԸ

1.

Ահա նորից դարձա , յեկա ,  
Հեռուներից ձեղ կարոտած .  
Խնդաց սիրոս այս առավոտ ,  
Ինչպես մանուկ թեթև ու բաց :

Ինչո՞վ , ինչո՞վ ձեղ վողջունե  
Առավոտն ու վերադարձո ,  
Իմ ընկերնե՛ր զործարանի —  
Յերպէնք ուրախ , յերգենք բարձր :

Կուզեմ այնքան արագ դառնան  
Քո անխվներն այս առավոտ .  
Իմ բարեկամ , իմ մեքենամ ,  
Կանաչ ուղիւս և արեսոտ :

Վորքան արագ ու շուտ անցալ  
Մեր բաժանման յերկու տարին .  
Բնկեր դարձավ ինձ հրացան  
Յեզ ողողպատե սասը սվին :

Կարծես յերբեք զու չես փոխվել ,  
Եյի , նույնն ես , ինչ վոր կայիր .  
Տե՛ս , ինչքա՞ն եմ յես բոյ քաշել ,  
Տե՛ս , բացվել եմ վոնց վոր մայիս :

Յես չգիտեմ ի՞նչ և ուզում  
Ալեկոծվող սիրան իմ հիմա,  
Դու յես զգում յերգն իմ հոգու,  
Յերկաթաթե իմ մեքենա :

2.

Բարո՛վ Մա՛նյա , բարո՛վ , բարո՛վ ,  
Քեզ ել տեսա այս տուավոտ .  
Սիրոս զսպել ել չիմ կարող ,—  
Կորոսավին բարո՛վ , բարո՛վ :

Ինչքան շուտ ես հասակդ առել ,  
Ու թրծվել ես զործարանում ,  
Գիտեմ , ճամրես շատ ես նայել ,—  
Մանյա , բարո՛վ , բարո՛վ , բարո՛վ ...

## ՑԵՐԿԱԹԻ ԿԱՐՈՏ

1.

Վեր կաց .—

Ո , վեր կաց , մայր իմ ,  
Քո դռնակը բաց :

Արշալույսն ե , տե՛ս ;

Արշավում արագ ,

Գալիս ե ահա

Վոսկի արշալույ

Գյուղերին հոգնած :

Հոգնած եմ այսոր ,

Կարոտից անքուն ,

Ախ , ինչքան լավ ե ,

Միշտ նայել այսպիս ,

Յերբ արշալույսն ե

Վոսկեղոծ վառվում :

Ահա ըռնկվեց ,

Վոսկե ծիրանին .

Վառվում ե կանաչ

Դաշտերի վրա .—

Հասկերը որոր ,

Կամաց ժպտացին .  
Գալիքը թևավոր ,  
Գալիքը կդա :  
  
Հիմանդ են կարծես  
Տնակներն այս հին ,  
Ու վարքան հողե  
Արձիթներ կան գեռ .—  
Դեռ կապրեն նրանք ,  
Կշնչեն կրկին .  
Մինչեւ չտիրի  
Յերկաթն ամեն տեղ :

Յեվ ահա յերավ ,  
Աբեն հրաշեկ ,  
Գարնան մի համբույր ,  
Տվեց դաշտերին .  
Կվառվեն ելի  
Շատ արշալույսներ ,  
Մեր բազմայերանդ ,  
Մեր անծիր յերկրին :

2.

Յեվ ահա են կողմ ,  
Մշուշում կորած ,  
Ահ ամպի նման  
Քաղաքն ե շարժվում :  
Հեվում ե , մխում ,  
Մխում ե , հեվում ,  
Վնակուց արթնացած :

Ա՛յս , պուտե հիմա ,  
Գնացքներ անցան  
Քաղաքի մոտով .—  
Կամ թե ավտոներ  
Զեն տվին իրար  
Ու անցան թափով :

Այս , ենտե՛ղ ,  
Այս , ենտե՛ղ ,  
Միշտ ենտե՛ղ  
Ազմկում և կյանքն  
Ու վառվում .  
Հրաթե . . .

Կանչում են հիմա ,  
Եշակներն անթիվ .—  
Փողոցները , յիք ,  
Փողոցներն յեռուն ,—  
Խոսում են տեղ  
Թելերն յերկաթե —  
Ինչուս յիս ու զու :

Կանչում և ահա ,  
Կանչում և նա ինձ  
Իր հաղթ թելերով .—  
Սրտով դրկարաց  
Կանչում և , կանչում .  
Կանչում և հեռվից :

Ալս, եհանձեղ,  
Ուս, ենտեղ,  
Եթշա են տեղ  
Աղմկում և կյանքն՝  
Ու վառվում  
Հրաթե :

1928

## ԱՊԱԳԱՆ

Կրարձրանան վաղը քաղաքներ նորից ,  
Քաղաքներ հսկա , վիթխարահասակ ,  
Յեզ ծխնելույզներ գործարանների  
Կը յերդեն թափով վերջին հաղթանակ :

Յերկիրն իմ կելնի հրավառ չնչով ,  
Յերկաթե կրծքով զրահավորված .—  
Մեր վերջին գյուղը պողպատե գեմքով  
Պիտի բարձրանա լեռների գիմաց :

Քաղաքներ անթիվ , քաղաքներ հսկա ,  
Փողոցներ անծիր ու բաղմամիլիոն .—  
Յերկիրն իմ հզոր — յերկիրն իմ վաղվա ,  
Վոր ոլիտի դառնաս ապագա նյու-Յորք :

Գալիս ե , գալիս , հրավառ յերդերով ,  
Մեր վառ ապագան , դալիս ե , կլա .  
Սիրտն իմ հեվում ե խելակար , դինով ,—  
Հենց հիմա այստեղ բարձրանում ե նա :

Խաղաղութեան

## ԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՐՈՏ ՅԵՐԵՎԱՆԻՆ

Դարձես փոխվել ե քաղաքն իր տեսքով,  
Աւզում ե մոր պես ինձ ճամբու դնի .—  
Բացել ե գիրկը կանաչ թեերով,  
Աւզում ե գրկի , ինձ բաց չթողնի :

Աւզում եմ շրջել փողոց առ փողոց ,  
Ամեն ինչ քաղցր ե բաժանման ժամին ,  
Դատել ե հոգուս մի ծանր բողոք .—  
Ինչքան անուշ ե այսորվա քամին :

Յեկել ե գնացքն ինձ փախցնելու ,  
Ինչպիս մայրական ծոցից հարազատ ,  
Լցվել են աչքերս — պատրաստ են լալու ,  
Չորցել ե համբույրդ ճակտիս , Յերեան :

Դարձես փոխվել ե քաղաքն իր տեսքով ,  
Աւզում ե մոր պես ինձ ճամբու դնի ,  
Բացել ե գիրկը կանաչ թեերով .—  
Աւզում ե գրկից ինձ բաց չթողնի :

## ԳՆԱՑՔՈՒՄ

Կոյարանն ե յերեռւմ,  
Մեկ ել դառնանք յետ նայենք—  
Ինչքան արագ ես վազում,  
Վերջին անգամ բարեհենք :

Մեր հետեռւմ հաղթական,  
Տես, քաղաքն ե բարձրացել—  
Եխ, յերկաթե բարեկամ,  
Սուլիր, սուլիր, տի մեկ ել :

Ինչքան ուրախ ե փչում,  
Քո վաս քամին կարոտից .—  
Յերգդ ուրախ ե հնչում,  
Սուլիր, սուլիր դու նորից :

Կայարանն ե յերեռւմ,  
Մեկ ել դառնանք յետ նայենք—  
Ինչքան արագ ես վազում,  
Վերջին անգամ բարեհենք :



ԴԵԿԱՎԱՐԻ ՄԱՀԲ.

Դնում եմ յես արակ սովորկոմ,  
Յեզ նորից Լուսժողկոմ ու Ցեկա, —  
Մտնում եմ կուսհիմնարկ ու գալիկոմ,  
Փնտում եմ ամեն աել, բայց չկա:

A 8011  
Տիսոք ե ու լուռ և հոծ մասսան,  
Հուզվել ե բանվորը ծովի պես,  
Տալիս ե նա քեզ կարճ պատասխան՝  
— Նա դնաց, նա չկա այլես:

Մնում ես քարացած վոնց արձան,  
Ու հանկարծ հուզվում ես խենթի պես.  
Սկզբից չես կարսղ հայտառալ,  
Բայց չե՞ վոր ասել ե Ցեկան:

Այն յե՞րբ եր, վոր տեսա յես նրան,  
Այն յե՞րբ եր վոր ամբիոն բարձրացավ,  
Յեզ կարծես խոսում ե նորից նա,  
Բարձրաձայն:

Թվում ե, թե հիմա նա կդա,  
Կը աեսնեմ ժպատպեմ, գլխարաց,  
Յեզ հանկարծ տեսնում եմ յես նրան  
Դադաղում՝ ահարտունջ, լուռ պառկած.

Սգում ե քաղաքը դառնորեն,  
Սգում ե կորուստը մեր հոկա.—  
Մեր վիշտը այնքան դառն ու խորն է,  
Զի կարող և սիրտն ել չաղա:

Յեվ ահա նորից եմ յես դնում,  
Իմ դեմքին խատություն ու թախիծ.  
Յելում եմ, հուզվում եմ, մտածում.  
Շրջում եմ, փնտուում եմ յես նորից:

Գնում եմ յես արագ սովորկոմ,  
Յեվ նորից լուսժողկոմ ու Ցեկա,—  
Ահա' նա.— Ժպտում ե վառ դեմքով  
Ահա' նա' .— Հրջում ե ու նա կա . . .

---

## ՄԵՌՆՈՂԸ ՅԵՎ ԱՃՈՂԸ

Նատել և տիսուր իմ պառավ նանին,  
Աչքերն արցունքառ, դլուխը խոհարհ,  
Դասնացած հողավ նայում և ժամին,  
Ժամի պես զառամ իմ պառավ նանին:  
  
Վոսկրտցած գեմքով, վարսերն ալեւեր,  
Թառամել և նու վոնց աշնան տերեվ.  
Ազոթում և յուո՞ ձեռները միշտ վեր—  
Ժամի պես անզոր մեռնում և նու յել:  
  
Դարձել և խեղճը մանկան պես անզոր,  
Վոսմերը անուժ ու ծնկները թույլ.  
Խոկ նրա զիմաց մի մահուկ աճող—  
Վազում և, ժողովում անհոգ ու անզուլ:  
  
Ամեն որ բակում նստում և հողնած,  
Հիվանդ կողերն և տալիս արեին—  
Ինչպես մայիսյան ծաղկեփունջ բացված,  
Յերնում և հզոր պիտներ Ալին:  
  
Աչքերը հիվանդ գեմքը խորշոմած,  
Դոզզոզում և յուու իմ մեռնող նանին,  
Շատը անցել և, արզեն քիչ մնաց,  
Վոր մեզնից արզեն նանին բաժանվի:

Հիվանդ ու զառամ իմ խղճուկ նանի՝,  
Մեռնում ե քեզ հետ մի ամբողջ աշխարհ,  
Յեզ կան մեռնողներ դեռ քանի-քանի՛,  
Վոր պիտի մեռնեն քեզ հետ այս աշնան :

Գյուղից քիչ հեռու մի բլրի գլխին  
Նստած ե տրտում սղավոր մի դեզ,  
Միշտ արյան ծարավ ու վրեժինդիր .  
Յեկեղեցին ե , վոր հազել ե ոե :

Վորպս դարերի մի հսկա պառավ ,  
Հեծեծում ե նա ու սղում ե լուռ,  
Արյուն ու վրեժ իր սրտում զամած՝  
Սկում ե դեռ նա իր աչքերով կույր :

---

## ՀԵՐՈՍՈՒՆԻՑԻՆ

1.

Պուեր լուս չքջեց դաշտերում  
Յեվ սիրեց մի կոլխասղ աղջկա .—  
Հիմա նա կարոտով և հիշում  
Շիկահեր աղջկան , վոր չկա :

Նա սիրեց դաշտերը գեղեցիկ ,  
Յեվ յերեց ձեզ համար շատ յերգեր ,  
Դուք նրան այնպես շուտ գերեցիք ,  
Յերգում և ահա նա յերգը ձեր :

Պայքարեց նա ձեզ հետ միասին ,  
Յերբ յելաք վճռական պայքարի .—  
Յերբ ընկապ ահարեկ թշնամին ,  
Նա խփեց ծիծաղկոտ քնարին :

Յերբ տարաք պայքարում հաղթանակ ,  
Նա սիրեց մի աղջիկ չիկահեր ,  
Կարոտով հետ դարձավ նա քաղաք ,  
Իր սրտում կրելով սիրո բեռ :

Յեվ հիմա խոհերովին իր բաղում ,  
Լուսմ և նա յերգը անխիլի ,  
Նա մաքով գեղի գյուղն և վաղում . . .  
Սիրում և յերկունքը սև հողի :

Գյուղից դուրս , լայնարձակ մի այլում ,  
Տեսնում ե ծաղկազարդ մի շիրիմ .—  
Կարդում ե Վերզուչի անունը —  
Յեվ շիրիմն ասում ե՝ ինձ հիշիր :

2.

Մոտ արի , սիրելիս , ոտար չեմ ,  
Այգաւս շուտ մոռացար Վերզուչիդ .  
Դե նոտիր ինձ մոտիկ , վոր պատմեմ ,—  
Կախվում են աչքերից յերկու շիթ :

Այցի յես յեկել ինձ , բարեկամ'մ ,  
Դե պատմիր , թե ի՞նչ կա քաղաքում ,  
Ի՞նչու ինձ ողնության չեկար շուտ ,  
Յերբ բնկա յես այստեղ պայքարում :

Մի մոայլ անձրեսոտ դիշեր եր ,  
Փողովից դուրս յեկա յես հոգնած .  
Վոնց հիմա՝ յես այնպիս կհիշեմ ,—  
Հետեվից ձայն տվին ինձ հանկարծ :

Պոետը գայլույթից սարսափեց ,  
— Լուսմ եմ , պատմի՛ր ինձ , դե խոսի .—  
Ուզեղն ու կամքը նա լարեց՝  
Վոճիրի մասին այն լավ լսի :

— Յես հանկարծ ահարեկ դողացի ,  
Ուզեցի հետ գառնալ , բայց ուշ եր .  
Ո՞ , չար գեվ , ինձանից հեռացիր ,—  
Դիմիս մեջ տաղնալ ու մշուշ եր :

— Հայրիկդ ե , Վերպուշ ջան , մի վախիր ,  
Մոտ արի , ասելիք ունեմ քեզ ,—  
Աղջիկո , վատ համրից հետ դարձիր ,  
Քեզ համար նորից եմ յեկել յես :

Ի՞նչ ունես ախր զու կոլխազում ,  
Յերբ վոր մեզ աքառը են ուզարկել .  
Ի՞նչ կասի ամեն մի չար լեզու ,  
Յերբ զու յես յեզրորդ բանարկել :

Վորդին ել զանատ հոր վավաճան ,  
Մտածիր , թե ի՞նչ ես արել զու .—  
Մի՛ զանատ մեզ համար նոր տանջանք ,  
Մի՛ լինիր թշնամուն մեր հլու :

— Ինձ համար արգեն զու ստար ես ,  
Հեռացիր , յեթե վոչ կճշտմ .—  
Յեթե զու ինձ հանգիստ չթողնես ,  
Քեզ խելքի կրերի մեր Զեկան :

Վագրի պես դազազած ու մոլի  
Ծերտունին հարձակվեց ինձ վրա .  
— Ախ զու լիբր , թշնամուս չեմ ների .  
Վորդին ել իր հորը մոռանա՞ :

Անձրեվստ զիշեր եր , յես անդեն ,  
Մարզակեր բարենին ինձ ճանկեց ...  
Ճակատիս զեմ արեց հրազեն ,  
Վոր հանկարծ սդնության չկանչեմ :

Դիմացի կառւրից մի ծեր շուն  
Յեզ հանկարծ նկատեց ու վսոնաց ,—  
Յերբ հանկարծ ժանգոտած մի վաշույն  
Բարախող կրծքիցս ներս սոզաց :

Վիրավոր՝ յես ընկա վաղոցում,  
Հոհոաց ծեր չունը կատաղի...  
— Տեսնենք վո՞նց կմնաս կոլխոզում,  
Հիմա նոր արժան եմ աքսորի:  
— Կարծում եմ՝ հիշեցիր Վերկուշիդ, —  
Նա սեղմեց իր ձեռքը չոր վերքին,  
Կախ ընկան այլերից յերկու չիթ,  
— Յես ընկա ոլայքարի վերելքին:  
Ինձ ասա, սիրելի բարեկամ,  
Յե՞րբ կգաս դու այցի իմ շիրմին,  
Ինձ այցի միշտ արի դու գարնան,  
Յեկ յերգիր իմ վիշտը բոլորին:  
Այցի յես յեկել ինձ, բարեկամ,  
Դե սլատմիր, թե ի՞նչ կա քաղաքում.  
Ի՞նչու ինձ ողնության շուտ չեկար,  
Յերբ ընկա յես այստեղ ոլայքարում:



Պոետը լուռ ըրջեց դաշտերում,  
Յեկ սիրեց մի կոլխոզ աղջկա...  
Նա հիմա կարոտով և հիշում,  
Շիկահեր աղջկան, վոր չկա:

---

## ՏՈՒԹԻ ՑԵՐԳԸ.

1.

Են որը ուրիշ եր,  
Են որը չեմ կարող մռասնալ,  
Են որը վոսկեթել մի հոգ և  
Ինձ համար :

Քաղաքից գյուղ յեկան նոր մարդիկ,  
Անծանոթ զեմքերով չորս հոգի,  
Շրջեցին մեր սարերն ու յետ զնացին,  
Վոչ մի բան չասեցին վոչ վոքի :

Մեր գյուղի ծերերը ախրեցին,  
Յերր նրանք մեր սարը բարձրացան,  
Քաղաքից զործիքներ բերեցին,  
Չափեցին մեր սարերն ու անցան :

Անցավ մի շարաթի :  
Քաղաքից գյուղ յեկան նույն մարդիկ,  
Յեկան ու բարձրացան լեռները,  
Ես անդամ ավելի շատացան—  
Բանվորները և ինժեներները :

Քաղաքից յեկան բանվորները,  
Յեկան ու մեր սարը փորեցին,  
Ամեն աել զինամիտ հորեցին,  
Դողացին մեր հսկա լեռները :

Զնդացին մուրճերը ,

Զնդացին ,

Բանվորներն ուժերը

Լարեցին ,

Տնքացին ժայռերը

Զնդացին մուրճերը :

Ու նրանք քանդեցին մեր լեռը ,

Հարթեցին մեր լեռան փեշերը ,

Քանդեցին ցերեկը ,

Քանդեցին գիշերը :

Քանդեցին արագ ,

Քանդեցին անդուլ ,

Մուրճերն յերդեցին

Լեռների սրտում .

Գիշերում այն մութ

Բանվորներն արթուն ,

Գտան մեր յերկըի

Միրաը վարդագույն :

Են որը ուրիշ եր ,

Են որը չեմ կարող մոռանալ ,

Են որը վոսկեթե մի հուշ ե

ինձ համար :

Քաղաքից բերին անիվ ու մասսո ,

Դողացին ծառի տերել , թուփը .—

Զնդացին մուրճերն ու զնացին խոր ,

Ցերեաց հանկարծ վարդաղույն տուֆը :

Ամոթիած հարսի պես հանկարծ ժողոաց  
Վարդաղույն զեմքով առաջը մեր սարի ,  
Մուրճերը մի պահ կանդ առան հանկարծ ,  
Վայրկյանը թվաց մի վոսկե տարի :

Նայեցին իրար բանվորներն ուրախ ,  
Բոլորի զեմքին ժպիտը խաղաց ,—  
Վառվեց խնդության մի հսկա Ուրալ :  
Նրանց սրտերում արյունը յեռաց :

Վայրկյաններն ուրախ՝ ժպիտներ վոսկի՝  
Սահեցին նրանց զեմքերից անահ ,—  
Յեզ նորից անցան վողեշունչ զործի՝  
Պայքարում արդեն հաղթանակ տարած :

Մուրճերը նորից հպարտ զնգացին ,  
Գործեցին ուրախ անխով ու մատոռ ,  
Լեռները հուզված ծանր անքացին ,  
Զնղացին մուրճերն ու զնացին խոր :

4.

Քաղաքից յեկան բանվորները ,  
Բանվորները մեր սարը փորեցին ,  
Ամեն տեղ դինամիտ հորեցին ,  
Դնղացին հնամյա լեռները :

Մեր գյուղի դժողոհ ծերերը լացեցին ,  
Նրանց հետ տխրեց հպարտ Մանթաշը .  
— Մեր սուրբ կուսական սարը քանդեցին ,  
Փոխեցին սիրուն Շիրակի զաշոը :

— Մեր սիրուն ու սեզ լեռներից փախան ,  
Փախան թռչուններ , Մանթաշը լոեց ,  
Ժամանակն անցավ , փոխվեց ամեն բան ,  
Ցավերիս վրա մի նոր ցավ դիզվեց :

Մեր սարիւ սիրուն առվակներն ափսո՞ւ ,  
Զբացան սարից ծաղիկն ու խոտը —  
Դժբախտ մարդիկ ենք , տիրացու Վարոս ,  
Աշխարհն ել հալբաթ զսիծանին մոտ ե :

Յոթ պապիս շարած ոլատը քանդեցին ,  
Սեփական կալս դարձրին ճամբա —  
Ի՞նչ ասեմ , գիտես , հոգիս հանեցին ,  
Մեզ մահից բացի փրկություն չկտ :

Են ցածի արտն ել ձեռիցս առան ,  
Մաշինի համար ճամբա յեն շինում .  
Ամեն ինչ զլիսիս դառնում ե հարամ .  
Սրտիցս կարծես արյուն ե զնում :

Քանդում են դաշտը , բերում են ոելսեր ,  
Հերթը դալու յե շուտով իմ արտին .—  
Յերկաթ գծերը սիրոս կկիսեն ,  
Ել տեր չենք լինի մենք մալ ու հանդի :

5.

Դղրդում եյին լեռները անդուլ ,  
Դղրդում եյին ահավոր ու խոր ,  
Զնդում ե մուրճը , բանվորն ե քանդում ,  
Բացում ե նորից մի նոր տուֆահոր :

Մեր գյուղում հանդես կար ,  
Մեր գյուղում տոնվում եր  
Մի մեծ տոն ,  
Գնացքը պիտի գար  
Դաշտերի միջով :

Յեկել եր ավտոն մոտիկ քաղաքից ,  
Բերել եր գողջույն ու կարմիր բարե .  
Զդվել եր դաշտում յերկաթե գիծը ,  
Վոր զնացքը դար վաղքով հրաթել :

Աշուն եր , աշուն , և ո՞վ չի հիշում  
Դաշտերը գեղին , առվակներ նիհար ;  
Հաջում եր հոգնած , անատամ մի շուն ,  
Յերբ դաշտում հնչեց կյանքի նոր քնար :

6.

Բոլորս հուզված նայում ենք ճամբին ,  
Ամրոխն եր հառել իր աշքերը սուր .—  
Բաց հորիզոնում յերեաց մի զիծ .  
Զդում եյինք մենք մի քաղցր սարսուս :

Բարձրանում եր զորչ մշուշը ծխի ,  
Ու արածվում եր դաշտերի վրա ,  
Արշավում եր զիւ յերկաթե մի ձի ,  
Արշամում եր նու . . .

Նայում ենք ուրախ , տեսքից զողում ենք ,  
Նա արագավազ , թափով զալիս ե .—  
Շարքի յենք կանզնել , սպասում ենք մենք ,  
Մեկը ահարեկ կարծես լոլիս ե .—

Նա մոտենում է .

Դողում ե

Գետինը .

Զնդում են ուլսերը ,—

Նա մոտենում է

Յերկաթե այն ձին ,

Յերկաթե սերը :

Դողում են ահից խրճիթներն առևս,  
Պատի վրայից ցած ընկավ մի քար .  
Դողում ե մայրս , ծիծաղում եմ յես ,  
Գալիս ե դեմից յերկաթե մի սար :

Ա՛յս , ո՞վ ե այդպես յերկաթը հյուսել ,  
Ամեն կտորին տվել մի խմաստ ...  
Ել զուր ե ապրում հնամաշ սելը .  
Ահա գնացքը յերկաթաիրան :

Ել չի ճոռալու մեր դաշտում սելը ,  
Վոչ ել կտնքան յեղները հողնած —  
Ահա շարժում ե յերկաթ ուսերը  
Յեվ նա դալիս ե մեր դաշտերով բաց :

Մեր դյուղի ծայրին խարխլված մի տուն  
Ցերերաց հանկարծ , փուլ յեկավ դետին ,  
Իսկ նրա դիմաց նոր տներ ժպտուն  
Նայում են ուրախ դնացքի ճամբեն :

Ահա դալիս ե  
Աչքերը կրակ ,  
Բիրերը հրդեհ . . .  
Մայրս լալիս ե .  
Մայրս ի՞նչ գիտե ,  
Վոր նա դալիս ե՝  
Մեզ պիտի փրկե . . .

Մլամիեց կատուն , չունը կաղկանձեց ,  
Տանիքի հողը ներս մաղեց քամին ,  
Մի զառամ ծերուկ տան զուռը փակեց ,  
Ու խելակորսւյս ցած ընկավ դետին :

Նա մոտենում է  
Դողում և գետինը .  
Մեռնում է հինը .  
Զնդում են ոելսերը ,  
Դողում են սրտերը .  
Նա մոտենում է՝  
Յերկաթե կարուր ,  
Յերկաթե ոերը . . .

7.

Նա ծխահանից դուրս վանեց ծուխը ,  
Շչակը կանչեց , շչակը ճչաց . . .  
Ահա կայանը , ահա մեր դյուզը՝  
Իր խրճիթներով դորշապույն ու ցած :

Յեզները հոգնած . սայլապանը տխուր ,  
Նայեցին նրա արագ թռիչքին .  
Սրչավում են նա զնդակի սկս սուր  
Մինչե հասնում է կայանը վերջին :

Առվակի ափին մի քանի դառներ  
Վախկոտ հայացքով նայեցին նրան ,  
Բայեցին տխուր ինչպես կլարնետ ,  
Նայեցին մեկ ել ու շշմած փախան :

Դողդոջ քայլերով զաւամած մի կին  
Սափորով ջուր եր տանում աղբյուրից —  
Ուսից զլորվեց սափորը գետին ,  
Յերբ վոր գնացքը դզրդաց դեմից :

Ճչակը ճչաց , շչակը կանչեց ,  
Ցերկաթե դեմքով նա գյուղը մտավ ,  
Ցուլը կապ կտրած գոմում բառաչեց .  
Իր անդորրության վտա՞նգը զգաց :

Նա ծխահանից դուքս մղեց ծուխը ,  
Ճչակը կանչեց , շչակը ճչաց .—  
Ահա կայանը , ահա մեր գյուղը  
Իր իրճիթներով գորչակույն ու ցած :

1929 թ.

Ա Յ Յ

1.

Արսրվում եր և խոր հեվում ,  
Շողեպնացքը սրբնթաց .—  
Նրանց այցի ելի գնում ,  
Բնկերներին իմ կարուած :

Աիրաս և ծփում կարուավ լի ,  
Դիշերվանդ պես պարզ ու հստակ ,  
Դեռ շատ յերգեր ունես , Լոռի ,  
Յեվ վառ դալիք , և հաղթանակ :

Յես լեռներիդ չեմ կարուաել ,  
Վոչ ել անքուն գիտ Դերեթին .  
Նրանց այցի յեմ յես յեկել ,  
Վոր քանդում եմ հանքը գեղին :

Լեռներ , լեռեր ու կրկին ,  
Մնանաւապատ ու մոայլ ,  
Դեմս վոված և Լոռին ,  
Վաղվա Լոռին վոսկեվոյլ :

Մեղ նայում եր հեռվից շախտը լայնայերախ ,  
Ակիզբ առած լեռան կրծքից դեպի խորքը .  
Այնպես յելավ ու փոթորկեց սիրան իմ ուրախ ,  
Յերբ յսեցի խորքից յեկող խուլ վորոտը :

Վորոտացին իրար հետքից շախտերն անդուլ ,  
Ինչպես հոգնած թնդանոթներ ուազմաղաշոի ,  
Յեթ ահավոր կրկնեցին լեռները խուլ .  
Նորից ձայներ , նորից աղմուկ լավեց շախտից :

— Լույսը վառիր , մութն ե արդեն ,  
— Կամաց գնա յես տենդում եմ .  
— Ի՞նչ զիգզագ ե շախտի ճամբեն ,  
Նրանք անահ տես քանդում են :

— Ես ո՞ւր , ես ո՞ւր , ո՞ւր ենք գնում ,  
Մենք մոլորված ճամբորդի պես .  
— Ահա անցքը դարձավ յերկու ,  
Կաթկթում ե ջուրն արնատեսք :

— Գնու՞ , գնու՞ , միշտ դեպի ձախ ,  
— Ահա հեռվում լույսի բծեր .  
— Ի՞նչ պատահեց , ա՞խ , դու ընկար ,  
Իսկ յես գտա յերկաթ զիծը :

—Դու լսում ես՝ մոտենում ենք,

Ահա նրանք վոնց են քանդում .

—Բարեւ, բարեւ, իմ ընկերնե՞ր,

Վողջույն բարեւ, սեր և խնդում :

Ոիրա իմ, ոիրա իմ, դու զգու մես,

Վոր հաղթող են ուժն ու մկան .

Ե՞նչպես յերդեմ ձեզ, ընկերնե՞ր,

Յերդու ձեր դեմ թույլ ու տկար :

## ԿՑԱՆՔԻ ԴՐԱՆ

Տարիքս չատ չեր , հաղիվ տասնըվեց ,  
Առաջին անգամ գործարան մտա .—  
Այն որը դանդաղ ու ծանր սահեց ,  
Յերբ կյանքի բեմը հպարտ բարձրացա :

Յերկաթի պես սե , պողպատի պես պինգ ,  
Տեսա յես այնտեղ կոշտացած ձեռներ —  
Տիրեց մի պահ ինձ և թախիծ և խինդ .  
Աղմկում եյին սե մեքենաներ :

Յես կյանքիս համար չափահաս դարձա ,  
Բաժանվեցինք մենք — մանկությունն ու յես ,  
Տեսա պայքարող յերկու դասակարգ ,  
Հոգուս մեջ հնչեց բողոքի մի յերգ :

Տարիքս չատ չեր , հաղիվ տասնըվեց ,  
Առաջին անգամ գործարան մտա .—  
Այն որը դանդաղ ու ծանր սահեց ,  
Յերբ կյանքի բեմը հպարտ բարձրացա :

---

## ՅԵՐԴ ՀՐԱԺԵՇՏԻ

(Բանֆակին)

Յես յե՞րբ եմ անցել այսքան ճանապարհ,  
Այս հսկա սարը յե՞րբ եմ բարձրացել .—  
Յեղել եմ յես ծույլ, յեղել եմ և չար,  
Բայց ճանապարհից յես հետ չեմ դարձել :

Վաղել եմ յես միշտ, յեղել եմ համառ,  
Վերելքի համար յերգեր եմ յերգել,  
Յես մի քիչ խենթ եմ լավ յերգի համար,  
Բայց ո՞վ չի սիրել, ո՞վ չի դեղերել :

Քնար ունեմ յես իմ սրտից հյուսած,  
Ինձ համար յերգն և ամեն ինչ հիմա .—  
Կր զնոմ հոգարտ քնարս ուսած,  
Իմ բոնած ճամբից յես հետ չեմ դառնա :

Գոցե յես մի որ «Հանցանք» եմ դորձել,  
Չեմ փնտուել իքար, չեմ լուծել խնդիր,  
Բայց վո՞ր ողոեսն և թեորեմ կառուցել,  
Վար յես ել սիրեմ խնդիրներ խրթին :

Թող թահաթուրը ել շբարկանս ,  
Թվերն ինձ համար կմնան ոտար .—  
Միայն նա կարող է ինձ հասկանալ ,  
Ավ վոր յերգում ե , ով ունի քնար :

Ախ , յես յե՞րբ անցա այսքան ձանապարհ ,  
Այս հոկա սարը յես յե՞րբ բարձրացա .—  
Յեղել եմ յես ծույլ , յեղել եմ և չար ,  
Վերջին կամուրջն ել ահա յես անդու :


1930 թ . Յերեան



## ՑԱՆԿ

Անխոյի յերգը	3
Սիրո և աշխատանքի յերգ	5
Յերդ Կարմիր Բանակին	6
Վերապարձը	8
Յերկաթի կարոտ	10
Աղաղան	14
Բաժանման կարոտ Յերեվանին	15
Գնացքում	16
Դեկավարի մահը	17
Մեռնողը և աճողը	19
Հերոսուհին	21
Տուֆի յերգը	25
Այց	33
Կյանքի դուսն	36
Յերդ Հրաժեշտի	37





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044657

(104)

ԳՐԱՎԸ 30 ԿՂՊ.

675-

80



В. ГРИГОРЯН  
**ПСЕНЯ КОЛЕСА**

Госиздат ССР Армении  
Эревань—1930